

Արձանագրություն թիվ 2

Մ/թ նոյեմբերի 16-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2011-2012 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին փուլի ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:
2. ա/ Ասպիրանտուրայի ընդունելության արդյունքների ամփոփում
բ/ 2-րդ և 3-րդ ուրսի ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարց:
գ/ հայցորդների երաշխավորման հարց:
3. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացը ֆակուլտետում:
4. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրերի մասնակցությունը:
5. Կրթությունը՝ կոռուպցիայի կանխարգելման միջոց:
6. Ընթացիկ հարցեր:

Հաստատեցին օրակարգը:

1. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետի առաջին կիսամյակի առաջին փուլի ընթացիկ քննությունների արդյունքները: Քննությունները անցել են նորմալ, թեև կատարվել են տեղեկագրերի հետ կապված որոշ ճշտումներ: Դեկանը ներկայացրեց մի առաջարկ՝ ըստ որի բակալավրիատում ստուգարքի ժամանակ 2 ստուգումներն էլ լինեն գրավոր:

Արտահայտվեցին՝ Ս. Ամիրյանը, Հ. Միրզոյանը, Ն. Խաչատրյանը:

- Որոշեցին՝ ընթացիկ քննությունների արդյունքները համարել դրական:
- Ստուգարքային ստուգումները անցկացնել 2 գրավոր աշխատանքներով:

2. ա/ Դեկան Ա. Բաղդասարյանը ամփոփեց ֆակուլտետի ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները: Նա նշեց նաև, որ նպատակահարմար է ասպիրանտներ վերցնել հիմնականում մեր բուհից՝ հաշվի առնելով նրանց ոչ միայն մասնագիտական, այլև մանկավարժական որակները:

բ/ Դեկանը ներկայացրեց ամբիոնների կողմից ատեստավորված ասպիրանտներին և հայցորդներին:

Արտահայտվեցին՝ պրոֆ. Հ. Միրզոյանը, պրոֆ. Ս. Զաքարյանը. Պրոֆ. Հ. Ավանեսյանը, պրոֆ. Գ. Շահվերդյանը:

Որոշեցին՝ ատեստավորել ամբիոնների ներկայացրած ասպիրանտներին և հայցորդներին՝ փիլ. Պատմության ամբիոնի ասպիրանտներ՝ Արուսյակ Ղարիբյանին, Դիանա Հայրապետյանին, Արփինե Մելքունյանին, Ելենա Թադևոսյանին, Ասպրամ Մկրտչյանին:

զ/ Դեկանը ներկայացրեց հայցորդության երաշխավորման հարցը:

Արտահայտվեցին՝ Հ. Ավանեսյանը, Ս. Ամիրյանը, Ն. Խաչատրյանը:

Որոշեցին երաշխավորել հայցորդության՝ անձի հոգեբանության ամբիոն՝ Ահի Հովհաննիսյանին, Կարինե Խաչատրյանին, Կարինե Գրիգորյանին: Հոգեբանության տեսության ամբիոն՝ Անուշ Ղուկասյանին, սոց. Փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոն՝ Մարգարիտ Ներսիսյանին

3. Դեկանը ներկայացրեց հեռականների ավարտական թեմաների և ղեկավարների հաստատման հարցը: Այն որոշեցին քննարկել դեկանատի նիստում:
4. Կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագրին մասնակցող դասախոսները նշեցին, որ իրենց ծանրաբեռնվածությամբ դժվարանում են համատեղել դասընթացները, որոնք շատ ինտենսիվ են:

Առաջարկեցին՝ դիմել ռեկտորատ երկարացնելու դասընթացների ժամկետները(հատկապես անգլերեն լեզվի դասընթացները) և պակասեցնել ինտենսիվությունը. Շաբաթը 3 օրվա փոխարեն 2 օր մասնակցեն:

5. Քննարկվեց կոռուպցիայի դեմ պայքարի մասին փաստաթուղթը:

Արտահայտվեցին՝ պրոֆ. Հր. Միրզոյանը, Ս. Զաքարյանը, Ս. Ամիրյանը:

Որոշոցին՝ հիմք ընդունել ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը 2011-2012թթ.:

6. Ընթացիկ հարցեր:

- Ռեկտորի կողմից ուղարկված փաստաթղթի հետ ծանոթացում՝ ուսանողի օրվա կապակցությամբ
- Ռեկտորատի որոշումը՝ խորհրդի նիստի արձանագրությունները համացանցում տեղադրելու մասին:
- ս/թ դեկտեմբերի 9-ին ֆակուլտետի տարեկան հաշվետվության նիստը՝ մեծ խորհրդով:

Խորհրդի նախագահ՝

Ա. Բաղդասարյան

Խորհրդի քարտուղար՝

Ս. Սարգսյան